

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէց)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՅՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐԿԱՅ 1898 ԹՒԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(26-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՓԵՏՐՎԱՐԻՑ ԱՄՇԱԿԸ ՀՐԱՍԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ ԲԱՅԻ ՏՕՆ ԵՒ ՏՕՆԵՐԻՆ ՅԱՋՈՐԻՑ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տանն և մէկ և տանն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ՌՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարմայա և Բարձրագոյա փողոցների անկիւն):
Կայսրութեան սուրբ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:
Իսպախ վճարվում է 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակագիտութեան համար.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակներ Վոսիկայից. Նամակ Նուշուց. Նամակ Սոփոկոյից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Տնօրէն Վանից. Մի անգլիացու նամակը. Մակեդոնական տանջանքները. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՍԱՆՏՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԻՄՆԱԳՐԱՆԵՐ.—ՅԱՋՈՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ձեռնածու Արեւը:

ՀԱՌԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՄԱՐ

Ձիւնորական ոյժ ասելով չը պէտք է հասկանալ միայն ցամաքային զօրքը. ծովային զինուորական ոյժը պակաս կարեւոր չէ, քան ցամաքայինը: Մեր ժամանակի ամենամեծ և ամենաուժեղ պետութիւններէ մէկը, Անգլիան, չունի ցամաքային զօրք, այլ իր բոլոր ոյժը հիմնել է ծովային զինուորական վրա: Անգլիայի առաջնակարգ դիրքը միջազգային գործերի մէջ պէտք է թերադրէր միւս պետութիւններին ևս ուժեղացնել իրանց ծովային զինուորութիւնը, որպէս զի կարողանան ոչ միայն պահպանել այն, ինչ արդէն ունեն, այլ և ընդարձակել իրանց ոյժը և ազդեցութիւնը: Եւրոպական պետութիւնները այժմ ծախսում են ծովային

զինուորութեան վրա մեծ գումարներ, իսկ Ռուսաստանը այս տարի յատկացրեց նոյն նպատակի համար իննսուներեք ռուբլի:

Վ. Գոյովաչեվ Առաջընթացում կարգադրած իր դասախօսութեան մէջ, որի նիւթն էր ռուսաց նաւատորմը, մի շարք պատմական փաստերով աշխատում է ապացուցանել, թէ Ռուսաստանը պարտաւոր է ծովային ոյժ ձեռք բերել և թէ անանց այդ ոյժի նա կորցնում է իր մեծ միջազգային ազդեցութիւնը և շատ քաղաքական և անտեսական շահեր: Անգլիայի հետ շփուած մեծացել է, իսկ նրա հետ հաւատարմորդ մտքաւոր համար կարելու է, որ Ռուսաստանը կարողանայ անգլիական նաւատորմի դէմ հանդէս բերել դիմադրող ոյժ: Ռուսաստանը արդէն սահմանակից է դարձել Անգլիային Աւզանիստանի կողմերում և շփուածներ ունի թէ Միջերկրական ծովում և Սուէզի ջրանցքում և թէ Վեժ ովիանոսում: Սև ծովի կողմից դեռ ապահովութիւն չը կայ: Թիւրքիան այն վիճակի մէջն է, որ նա կարող է առաջման պէս զանազան բարդութիւնների պատճառ լինել: Գոյովաչեվ առաջ բերելով պատմագիր Նյուսերի խօսքերը թէ «Թիւրքիան մի քաղաքական գործիչ է, որը կարելի է գործ դնել Աւստրիայի դէմ և

Ռուսաստանի մեծացող ոյժի դէմ», ասում է, որ յայդ հայեացքը Աւստրիայի վերաբերմամբ ուղիղ էր մինչև ներկայ դարի սկիզբը. իսկ այժմ Անգլիայի հետ հաւատարմագէտ Աւստրիան էլ գործ են դնում այդ գործիքը միայն Ռուսաստանի դէմ: Առիթները անպակաս են եղել և կը լինեն, որովհետև Թիւրքիայում դժգոհներ միշտ պատրաստ են: «Անբաւական են եղել յոյներ և բուլղարներ, քիւրդեր և հայեր, բուլղարներ և սերբեր, ալբանացիներ և կրեթացիներ: Հէնց որ մի դժբաղդ դէպք էր տեղի ունենում, իսկոյն Անգլիայում և Աւստրիայում հիմնվում էին բարեգործական մասնաժողովներ հայածովածների պաշտպանութեան համար, հազարաւոր յօդուածներ էին գրվում լրագիրներում՝ սարսափ և զարհուրանք տարածելով ամբողջ Եւրոպայի հասարակական կարծիքի վրա. իսկ իր ապէս պաշտպան էր դուրս գալիս միայն Ռուսաստանը, տանելով ամեն տեսակ զրկանքներ: Եւ որովհետև Ռուսաստանը չէ կարող իրան ազատ համարել զանազան տեսակ դէպքերից և արկածները, նա պէտք է ուժեղ նաւատորմ ունենայ իր հեղինակութիւնը պահպանելու համար»:

Սյդ բոլորը ուղիղ է. սակայն մի բան մնում է անհերքելի. մի պետութեան պատրաստութիւնը ստիպում է նրա հարեւաններին էլ զինվել և այդպիսով մի քանի ժամանակից յետոյ դարձեալ երևան է գալիս անհաւատարմութիւն և դարձեալ նորանոր ջանքեր են պահանջվում հարեւանի բռնած դիրքին հասնելու համար: Եւ այսպէս անկարգ: Այժմիկ հաւասարակշռութիւն պահպանելու համար Եւրոպայի բոլոր պետութիւնները ջանք ու միջոց չեն լնայում, սպառելով իրանց ժողովրդների անտեսական միջոցները: Կա մի անուղղակի պահանջ է, դա մի անխուսափելի շարիք է: Առաջընթացների մէջ մրցողութիւնը այնքան սաստիկ է, որ անհրաժեշտ է հաւատարմակշռութիւն պահպանել նրանց ոյժերի մէջ: Ուրիշ կերպ չէ կարող լինել, քանի որ ուժեղը միշտ պատրաստ է ոտնակոխ անել թոյլին: Գոյովաչեվի կողմից միայն անհրաժեշտ է մէջ չէ. նա բոլորովաժ է և և ազգերի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍԱԿՆԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՑ

ԿՄԻ

„Հրաշալի մանուկ“

Վերջին օրերս Վոսիկայի երաժշտական աշխարհում խօսք ու զրոյցի միակ նիւթն էր մի «հրաշալի մանուկ», ինչպէս որ նրան անուանում էին երաժշտական շրջաններում, որը դարձանք և հիացման խորին սպաւորութիւն թողեց ամենքի վրա: Եւ, իրաւ, պէտք էր տեսնել այդ «հրաշալի մանուկի» շնորհը, պէտք էր զգալ նրա ապշեցուցիչ տաղանդի ոյժը, համոզվելու համար, թէ երբեմն որպիսի անմեկնելի հրաշքներ է դործում ընտելութիւնը: Ահա դարձանալակ (հարապալ) է բարձրանում 11 տարեկան մի մանուկ աղջիկ՝ սպիտակ, կարճ շորով, թուխ դէմքով, ուսու աչքերով ու խուլած մազերով: Նրա փոքրիկ երեւին խաղում է պարզ ու քաղցր ժպիտ: Մանկական անփորձութեամբ նա մի քանի անգամ վերու է տալիս խուռն բազմութեան, որ լցրել է աղնականների ժողովարանի դահլիճը, և ապա վստահ ժօտեմում է վիթխարի դաշնամուրին, որի հետ համեմատած ինքը, կարծես, մի թիթեռնիկ է փղի առաջ: Նա նստում է կլարնո, բարձր ախոռի վրա, մանկական փոքրիկ մասներով մի քանի թոյլ ակիորներ է առնում և սպասում է, որ հետաքրքրութիւնից յուզված բազմութիւնը, որը էլեկտրական ցնդումով տեղից վեր է թռել երեխային ոտից-գլուխ լաւ դիտելու համար, հանդարտվի, նստի իր տեղը: Վերջապէս բազմութիւնը հանդարտվում է. սիրում է մի տեսակ անհամբեր, սպասողական լուռութիւն: Հէրաշալի մանուկը սկսում է նուագել— և ինչպէս նուագել... Ի՜նչ պանչելի ձայնը՝ մերթ հօր ու փոթորկալից, մերթ մեղմ ու անուշալուր, մերթ քաղցր-մեղմապաղծ, մերթ անհոյ, բերկրալից, մերթ տխուր, աղեկտուր... Եւ այդ բազմազան ձայների, այդ անբաւ առատ հնչիւնների ծովը ծիւղում է տաք հատ փոքրիկ, նուրբ քնքրոյ մանկական մասնիկի տակ... Աջքը չես ուղում հաւատալ, որ քո առաջ նստած է տասնութամեկ տարեկան երեխայ. մի հասակ, կեանքի մի ժամանակաշրջան, երբ ուրիշ երեխաներ դեռ տիկնիկ են խաղում կամ դաշնամուրի կլավիշները մատով դնողնապանելու խաղալիքներ են համարում: Կախարդած ակամբ են դնում և քանի գնում, այնքան մեծանում, զօրանում է «հրաշալի մանուկ» արած տալարութիւնը հան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԵՌՆԱԾՈՒ ԱՐԵԼԸ

(Ամբոլեկ կեանքից)

Ո՛վ չէ յիշում ձեռնածու Արեւին, որը քսան— կրեւտն տարի առաջ մեծ հռչակ էր վայելում ամբողջ Անգրկովկասում: Հասարակ դասակարգը դեռ մինչև այսօր էլ հարգող տեսակ առաւելներ ու հերկաններ է պատմում նրա հրաշագործութիւններէ: Ո՛վ նրան աչքով տեսել է՝ ինքն իրան երջանիկ է համարում և չը տեսնողները նախանձն է շարժում:

Եւ իսկապէս շատ ընդունակ մարդ էր: Իբրև ձեռնածու, վերին ստորին ճարտար էր, իբրև գուարձախօս՝ աննման և իբրև ամբողջ ուրախացնող և ծիծաղեցնող՝ հազուադէպ: Ո՛վ մի հարսանիք կամ հիւրասիրութիւն կատարեալ չէր համարվում, եթէ Արեւը բացակայ էր լինում: Ամենքը նրան սիրում էին, թէպէտ և վախում էին նրանից, մասնաւոր կանայք ու պատանիներ:

Ո՛վ կը համարձակվեր նրան վերաւորել, չէ որ Արեւը ընդունակ էր իսկոյն «աղօթել» և յանդուգն մարդուն որ և է անասուն (գլխաւորապէս էլ) դարձնել:

Շատ շատերը պատմում էին և մինչև օրս էլ կրկնում են, իբրև ակամատեսներ, թէ այս ինչ մարդուն, այս ու այս թվականին Արեւը էլ

դարձրեց: Ո՛վ մի մտալիտա կամ գինեւաձառ փոքր չէր ընդունում նրա ձեռքից: Ստիպված պէտք է երգէր, սուրբերի անուններ յիշեր ու հաւատացներ, որ փոքր սատանայական չէ, կախարդական չէ: Ուր որ կանգ առնէր, լինէր փողոց, հրապարակ թէ եկեղեցու դաւիթ, նրան բոլորակալ շրջապատում էր ամբողջ և աչքեր լայն բացարձակ անհամբեր սպասում թէ Արեւը մի բանով կը զուարճանէ, կը հիացնէ: Իբրև ամբողջ, ցածր դասակարգի սիրելի՛ նա իր հաւատարմ չունէր:

Նա հայ էր, բայց կովկասեան բազմաթիւ ազգերը հաւասար կերպով յափշտակված էին նրանով: Նա այդ շատ լաւ գիտէր և իրան բախտաւոր էր համարում: Կան մարդիկ, փոքրիկ մարդիկ, որոնց մէջ մի տեսակ ակտո կայ անպատճառ հռչակվելու, բայց թէ ինչ կերպով և միջոցով—այդ մի և նոյն է: Արեւը այդպիսիներից չէր: Նրա արձեւոր ձեռնածութիւնն էր, որին նուրբում էր հօգով ու սրտով: Նա ներկարար էլ էր, բայց այս բանն էլ կապում էր ձեռնածութեան ու ճարտարութեան գաղափարի հետ: Նա բարձրանում էր եկեղեցիների գմբէթները վրա, կարկուտ, ներկում էր, ծուծ կամ վնասված խայր ուղղում էր և այլն: Հազու կը գտնուի Անգրկովկասում բարձր եկեղեցի, որի գաղափի վրայից Արեւը փչած չը լինի իր փողը: Երբ Թիֆլիսում յանկարծ կը հնչէր ինչ որ մի տարօրինակ եղանակ, իսկոյն բոլոր աներից դուրս կը թափվէին մեծ ու փոքր և ձեռքեր ունեցած կիսատ գործերը երեսի վրա թողած՝ աչքերը կուզէին այս ու այն եկեղեցիներ

կողմը, որոնցից մէկի գմբէթի ծայրին կը տեսնէին Արեւին գլխի վրա սնկված և ոտները օդի մէջ պտտեցնելու: Կանայք անմիջապէս գունատվում էին, աչքերը ծածկում, իսկ պառանքները երեսներին խայր էին հանում ու աղօթում: Ամենքը, առանց բացառութեան, դարձանք էին յայտնում նրա աներկիւղութեան վրա, իսկ ցածր դասակարգը նրա մէջ տեսնում էր դերբանական ոյժ, ի հարկէ, շնորհված եթէ ոչ Աստուծուց, դրնէ սատանայից: Առիւծատիրու և քաջ Արեւը—այսպէս էր սկսվում մի երգ, որը մի ժամանակ տարածված էր ամբողջ մէջ և որի հեղինակը, ինչպէս ասում էին, պէտք է լինէր էջմիածնի արեղաններից մէկը: Ամուսնաւալ է այդ երգի հետեւել կտորը. «Եթէ ամենայն բան պատմեմ, սարսափ կը տանէ լսողաց: Արեւան անշուշտ ապշել է, ակամատես լինելով Արեւի քաջագործութիւններին, որ կատարել է մայր Աթոռի տաճարի դաղաթի վրա»:

Այնան հանդարտ օրերից մէկն էր: Ամբողջ շարժվել շարժանակ անձերեւոյց յետոյ, արեւը, մատախուղի ծայրերը պատառելով, երևան էր հանել իր պայծառ դէմքը և կարծես իր յաղթական օյժի վրակատար գործիչներ սպառնացանքը համար՝ մտադրվել էր ամեն տեղ ցամաքեցիներու:

Անգրկովկասեան փոքր քաղաքներից մէկը գուարթացել էր: Կոտրիների վրայից թափանցիկ գուրջ էր բարձրանում: Բնակիչները մըրջիւնների նման իրանց բուններից դուրս էին թափվել ու շտապով այս ու այն կողմ էին քայ-

լում: Տեսիլների առաջ նկատվում էին լուացքի գոյնգոյն շարքեր: Օդը մէջ տարածված էր աշնան մրգերի հոտ:

Գաղաթի հրապարակի մի ծայրին, ուր դեռիւնը արդէն ցամաքել էր, հաւաքվել էր մեծ բազմութիւն: Ամեն կողմից շտապով դալիս էին մարդիկ ու խնկում ամբողջ մէջ: Պատանիներն ու երեխաները շնապառաւ լաղում էին,— որը զլուաբաց, որը մի հատ կոշիկով և բազմաթիւները ձիւղում մէջ էին խցկվում: Զուրման փշում էր մի ուրախ եղանակ և «գճօլլն», խորամանկ ժպիտը երեսին, մի հատ աչքով մէկի հետ հանուքներ էր անում ու «գճօլլն» ուժգին զարկում:

Բազմութիւնը մի փոքր յետ քաշվեց: Մէջտեղ բարձրացրին փայտէ մի երկար սանդուղք, որի ծայրը դէմ տուին մի տան կտուրին: Սանդուղքի վրա բարձրացաւ մի մարդ ու նստեց կտուրի վրա: Հազին ունէր կարմիր, կարճ փէշերով բաճկոն, սպիտակ կոճակներով: Կա Արեւն էր: Ոտներին կապեց անաղին երկարութեամբ փայտէ ձողերը: Այնուհետև հազու սպիտակ գոյնի վարտիք, որի երկարութիւնը հիշդ հաւասար էր փայտէ ոտներին: Ամբողջ մէջ տիրում էր խորհրդաւոր լուռութիւն: Բոլորի աչքերը բարձրացած՝ անհամբեր սպասում էին խաղին: Արեւը, մեծ պոռնութեամբ իր գործը աւարտելուց յետոյ՝ շարժվեց իր տեղից ու կանգնեց տարօրինակ ոտներով վրա: Նրա դէմքին ժպիտ չը կար: Ամբողջը, կարծես կաղօթք պայմանաւորված, մի խաղաղից գոռում գոչում բարձրացրեց: Նա, անուշաղիթ թողնելով մարդկանց ուրախ աղա-

դիտակները վրա, այնքան աւելի պարզ, աւելի պայծառ երևան է գալիս նրա զարմանալի տաղանդը իր ամբողջ փայլով: Կարճ ընդմիջումներով նա նուազում է Քեթսօվին, Ծոպին, Բախ, Մենդելսոն, Լիստ, Բուրնհայմեր: Եւ երաժշտական գեղարուեստի այդ հսկաների ստեղծագործությունները նա պատկերացնում է հանդիսականների աչքի առաջ այնպիսի շնորհով, այնպիսի փառաստեղծութեամբ և հմտութեամբ, այնպիսի խորին զգացմունքով և հասկացողութեամբ, որ պատիւ կարող է բերել ոչ միայն դաշնամուրի առաջ ձեռքացած կոնսերվատորիաների պրոֆեսորներին, այլ նոյն իսկ անուն և հռչակ հանած, արդէն հասուն արտիստ-դաշնակահարներին: Մենք լսել ենք Գալլերի, Զոֆանի, Բեդենայուէրի, Չիլոտտի, Գարբիոլիէի պէս անունների դաշնակահարներին և առանց չափազանցութեան կարող ենք ասել, որ նրանք յանձին այդ «հրաշալի մանկան» հենց այժմ արդէն ունեն կի՞ն ոչ իրանց հաւասար, գոնէ շատ խոշոր մրցակից տաղանդ, որն ապագայում, ով գիտէ, ինչ չը-բաշխելու գործէ: Լսելով այդ «հրաշալի մանկան» նուազվել, այնքան յետ զարմանում նրա գեղեցիկ տեխնիկայի վրա. գոնէ ուղում ես չը զարմանալ, որ նրա փոքրիկ, ձկուն, արագաչարժ մասներն աչքով անբերանելի թույլներու և սրացումներ են գործում կլավիշների վրա. չես ուզում զարմանալ, որովհետև մտածում ես, որ տեխնիկան, ինչքան չը լինի, մեքենայական գործ է, որին կարելի է հասնել երկարատև, անդուլ աշխատանքով: Սակայն ինչ ասել այն խորախափանց բերանողութեան, այն բուն ըզ-գացմունքին, այն խելացիութեան, որով նա թարգման է հանդիսանում Քեթսօվինի ու Ծոպինի ստեղծագործություններին, նրանց հոգևոր բարձր զգացումների ու թրթռումների: Արդեօք ընտելված է դա, թէ զիտակցութեան: Քեթսօվին, Ծոպին և տասնութն էլ տարեկան և երե-կուսի միջին ընդ ընդում հրաշք չէ:

Պատուա Գալլեր—այսպէս է այդ «հրաշալի մանուկը» ազգանունը—ազգով չի կարող է և իր երաժշտական կրթութիւնն ստացել է արտասանմանում: Նրա ուսուցիչներն են եղել սկզբ-բուն հռչակաւոր դաշնակահար Գալլերը, իսկ վերջերս երկուսուսոր Զոֆանը, որ երկու տա-լիր առաջ պատեղ անպակաս արժեքի իր երաժշտական տաղանդով և այժմ վայելում է Եւրոպայում առաջնակարգ դաշնակահարի համ-բաւ: Գալլերը Վոսկիլայում չորս կուրսերու սուսեց և ամեն մի կուրսերուն էլ ազնուականների ժո-ղովարանի դաշնակահար անել զգեւոր տեղ չը կար: Անկողիք բարձրութեան մէջ իր թւում աչքի էր ընկնում մանուկ տարբեր, որ բարի նա-խանձով նայում էր իր միջին դուրս եկած ընտելեան այդ հրաշքին: Նոյնքան կուցեցրտ և նոյն աշդուութեամբ Գալլերը սուսեց է նաև Պե-տրբուրգում: Այդ «հրաշալի մանուկը» ունի և ստեղծագործական տաղանդ: Նա կուցեցրտնե-րում նուազեց իր մի քանի հեղինակութիւնները, որոնք մեծ աշդուութիւն ունեցան և պակաս զարմանք չը պատճառեցին ունկնողը բարձու-թեանը: Երկու մայրաքաղաքներ ըզուր լրագիր-

ները միահամուռ գովասանքով և հրացմունքով խոսեցին այդ զարմանալի երեխայի տաղանդի մասին:

«Այդ մանուկի մէջ ամեն ինչ ապշեցնում է մարդուն—և չափազանց զարգացած տեխնիկան, և զարկի թեթևութիւնն ու փափկութիւնը, և մանուկանոց երաժշտական ճաշակն ու խորութիւ-նը»,—գրում է Պետրբուրգի յայտնի երաժշտա-գէտ և կրթական Կիւրն: Մի այլ նոյնպէս յայտ-նի երաժշտական կրթական Սոյլիէի ասում է՝ «Այդ զարմանալի երեխան ուղղակի մի չը տեսն-ված երեխոյ է... նա, Աստուած գիտէ, թէ որ-պիսի պտուղներ կարող է տալ, եթէ նրա տա-ղանդի զարգացումն անչեղ կերպով առաջ տարվի»:

ՆԱՄԱԿ ԾՈՒՇՈՒՑ

Մարտի 29-ին
Մարտի 22-ին կայացաւ հայոց Բարեբոքա-կան ընկերութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողովը՝ նախագահութեամբ Սասնակ վարդապետ Բարդաղասարեանի: Ներկայ էին 119 անդամայ ընդամենը 32 հոգի: Պարագլուխը առաջին էր՝ վերաստուգող յանձնաժողովի երեք անդամի ընտրութիւնը: Ընտրվեցին՝ Ալեքսանդր Տերտ-րեան, Իշխան Զուրաբեան և Գրիգոր Թորոսեան: Հետեւեալ կիրակի, մարտի 29-ին, նշանակվա- էր այդ ժողովի շարունակութիւնը, որին ներկայ էին 31 անդամ և որի պարագլուխը առաջի-կան էին, վերաստուգող յանձնաժողովի ղեկու-ցումը, վարչութեան և դրադարան-ընկերացա-րի 1897 թվի հաշիւները քննութիւնը և հաստա-տարութիւնը, և վարչութեան 2 անդամի և 1 փոխ-անդամի ընտրութիւնը: Սասնակ վարդապետի բացակայութեան պատճառով ժողովին նախա-գահում էր պ. Գ. Մէլլը-Շահապարեան:

Նախ կարդացվեց յանձնաժողովի զեկուցումը, որի մի քանի նկատողութիւններ երկար վիճա-րանութեան և բացատրութիւնների նիւթ դար-ձան: Այնուհետև կարդացվեց ընկերութեան ելե-մուտքի հաշիւը, որից երևաց, որ 1897 թվի ըն-թացքում տեղական ճիւղը մուտք է ունեցել 2,149 ռ. 68 կոպ. և ծախս՝ 2,012 ռ. 50 կոպ.: Երևաց և այն, որ ընկերութեան վարչութիւնը իր գլխաւոր ուշադրութիւնը կենտրոնացրել է դրադարան-ընկերացարանի վրա, որի համար ա-րած ծախսի դուստրը կարծում էր 1,449 ռ. 43 կոպ.: Գործադիր անդամների թիւը եղել է 150: Կարդացվեց նոյնպէս դրադարան-ընկերացարանի կարգախոսութեան և գործունէութեան մանրա-մասն հաշիւը, որից աւելորդ չենք համարում մի քանի հետաքրքրական կէտեր առաջ բերել:

Առ 1-ն յունվարի 1898 թվի դրադարանն ունի՝ 4,467 կաթ դրք՝ 6,276 ռուբլի 56 կոպ. ար-ժողութեամբ և կահկարասիք՝ 618 ռ. 51 կոպ. արժողութեամբ: 1897 թվի ընթացքում բաժա-նորդների թիւը եղել է 845. դրանցից տարեկան բաժանորդներ եղել են 11 հոգի, ամսական՝ 428 և օրական՝ 406: Ընկերութեան անդամները օգտվել են ձրիաբար, նրանցից յաճախողների թիւը մօտաւորապէս 60 է եղել: Բաժանորդա-

վճարներից մուտք եղել է 253 ռ. 35 կ.: Գրա-դարան-ընկերացարանից օգտվողները բաժանվել են հետեւեալ կարգով: ըստ արդութեան—հայեր՝ 3. ըստ դասակարգի—ուսումնաւորներ՝ 30,5, վա-ճառականներ՝ 25, աստիճանաւորներ՝ 10, ու-սուցիչներ և վարժուհիներ՝ 5, արհեստաւորներ՝ 5, կանայք՝ 2,5, մնացած մասը եղել են այլ դասակարգի մարդիկ: Կարգաւոր համար դուրս տարված դրքերի թիւն է 7,453: Վերջում դրք-բերը բովանդակութեան կողմից հետեւեալ կեր-պով են գալիս. առաջին տեղը բռնում է բեյ-լետրիտիկա (60%), երկրորդ տեղը՝ պարբերա-կան հրատարակութիւնները (ամսագիրները), եր-րորդ տեղը՝ կենսագրական և պատմական գը-րուածքները, չորրորդ տեղը՝ բնագրական, հին-գերոզ տեղը՝ բժշկական և առողջապահական, վերջին տեղը՝ սօցիոլոգիական և այլ գրուածք-ները: 1897 թվի ընթացքում ընկերացարանը ըս-տացել է՝ ամսագիրներ և շաբաթավերթներ՝ 18, օրագիրներ՝ 12 հատ: Գրադարան-ընկերացարանի իննամսեայ գործունէութեան համեմատական թը-ւանշանների աղյուսակից պարզ երևում էր, որ այդ գեղեցիկ հիմնարկութիւնը իր գոյութեան ընթացքում չօգտվելի կերպով նպաստել է ըն-թացարանութեան տարածվելուն՝ տեղական ազգա-ընկերութեան բոլոր դասակարգերում: Հետեւա-պէս, չնորհակալութեան արժանի են այն պա-րտները, որոնք չեն ինչպէս և այժմ չեն ինա-յում իրանց եռանդուն աջակցութեամբ նպաս-տել յիշեալ հիմնարկութեան գոյութեանը:

Արդիտես ցերեկվայ 3 ժամն էր, ուստի և վարչութեան անդամների ընտրութիւնը յետաձգ-վեց միւս անգամին: Աւելորդ չենք համարում այս բոլորից յետոյ՝ նկատողութիւն անել մի տը-գեղ երևոյթի մասին. երկրորդ ժողովում վար-չութեան գործունէութեամբ վերաբերեալ մի քա-նի նկատողութիւնները ընդհանուր ժողովին ներ-կայ եղող մի քանի անձինքների կողմից հաս-նում էին անձնական վիրաւորանքի, որը, մեր կարծիքով, անվայել բան էր:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գորպատ, մարտի 25-ին
Խնդրեմ «Մշակ» մէջ տպագրել հետեւեալը. «Hoboe 0603.» լրագրի № 3964-ի մէջ լոյս տե-սաւ Գորպատից 5 վրացի ուսանողների նամա-կը, որոնք յայտնելով իրանց պայտը կրեկայթի կատակարիչներին, մի և նոյն ժամանակ յիշա-տակել էին այդ երեկոյթի խոր վերաւորված ուսանող Աթաբեգեանին: Այդ նամակը թիւ-րիմացութեամբ աւելի է տուել, որովհետեւ Գորպատում կան երկու ուսանող Աթաբեգեան-ներ. զանազանուր համար հարկաւոր էր կամ յիշել ազգանունն հետ անունը, կամ կամ այն բարձրագույն դպրոցը, որտեղ ուսանում է այդ ու-սանողը: Ես ստացել եմ արդէն ծանօթներից նամակներ, որտեղ խնդրում են ինձ՝ մանրա-մասն պատմել այն վիրաւորանքի մասին, որ հասցրած է եղել իրը թէ ինձ: Աւստի ստիպ-ված եմ յայտնել, որ վիրաւորված ուսանող Ա-թաբեգեան ես չեմ, այլ անանաւոր-ժակայն ին-տիտուտի ուսանող Յովհաննէս Աթաբեգեանը: Գորպատի համալսարանի իրաւաբան-ուսանող՝ Տիգրան Աթաբեգեան

III

Մտի գիշեր էր: Հիւսիսային կողմից փչում էր բամբուլ: Ծառերից թափվում էին չորացած տերեւներ և պտղոտ տալով գետնի երեսին, վեր-ջապէս կղզիներում էին որ և է փոսի մէջ կամ անկիւնում: Փոքրիկ քաղաքը ընկղմված էր խա-ւարի մէջ: Թէպէս այս ու այն տեղ ճրագի լոյս էր դողողում, սակայն կարելի չէր գուշակել թէ որ տնակի կամ խրճիթի մէջն է:

Մէլը իր հունարները ցոյց տալուց յոյժած՝ փակվել էր իր սենեակի մէջ, որը մեծ նմանու-թիւն ունէր ճգնաւորական խոցի և իր համեստ ընթրիքը աւարտելով՝ մի առ մի մտաբերում էր թէ օրը ինչով սկսվեց և ինչով վերջացաւ: Այն համոզմունք էր գալիս, որ իր դերը աշդու-թեամբ կատարեց և իրան երբեքին համարելով, ժպտում էր, մինչև անպամ երեքին ծիծաղում: Ժամանակ առ ժամանակ նրա սկանջին հաս-նում էր ինչ որ փափոց, բայց նա կնիթարեղով, որ բամբուլի ազդեցութիւնն է, անուշադիր էր թողնում: Գնաւոր պատրաստվեց: Չանապարհոր-դական թեթիւ անկողինը ուղղեց՝ թթի տակ եր-դելով անկական մի եղանակ: Վերանկր, որը կարած էր զթերի եռանկիւնի կողմերից, թափ տուեց, բարձի տակ դրեց իր սև արխաւուրը, յօրանջկով նստեց իր անկողնի վրա, պակեղու-ղիտաւորութեամբ: Չայները շարունակվում էին: Արեւը սկանջները սրեց և շուտով համոզվեց, որ իր դրան մօտ մարդիկ են կանգնած:

—Ո՛վ էր, բարկացած ձայնով կանչեց նա: Չեղաւ պատասխան: —Ո՛վ էր, հարցնում եմ, կրկնեց ձեռնածուն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրախութեամբ առաջ ենք բերում հետեւեալ տողերը, որ Պետրբուրգից, մարտի 28-ից և ուսուցում են Մոսկույի լրագրիներին: «Ներկա գրողների Դաշնակցութեան ընդհանուր ժողովում կարդացվեց իրաւաբանական յանձնաժողովի այն ընդարձակ զեկուցումը, որի հիման վրա, Դաշնակցութեան կօմիտեալը, Դաշնակցութեան կանոնադրութեան զօրութեամբ, պէտք է միջ-նորդութիւն սկսէ ներքին գործերի միջխտրի մօտ: Զեկուցումը բացատրում է մամուլին վե-րաբերեալ օրէնսդրութեան պատմական ընթաց-քը 1865 թվից և քննում է մամուլի այժմեան զրութիւնը: Նրա եզրակացութիւնները ձեւակերպ-ված են հետեւեալ կէտերով. միջնորդել, որպէս զի անպայաղ վերաքննութեան ենթարկել ընդ-հանուր օրէնսդրութիւնը մամուլի մասին. միջ-նորդել վերացնելու նոր կարգի այն մի քանի անյարմարութիւնները, որոնք առաջանում են, երբ մի որ և է հրատարակութիւն անցնում է մէկ հրատարակչից միւս հրատարակչին. միջնոր-դել վերացնելու ժամանակաւոր խմբագրի հաս-տատելու անյարմարութիւնները, ինչպէս որոշել վաղեմութեան (զապլուստ) ժամանակը նախա-դրույալումների համար և դաւառական մա-մուլի իրաւունքները հաւասարեցնել մայրա-քաղաքի մամուլի իրաւունքների հետ: Ժողովը միաձայն ընդունեց զեկուցումը, երախտագրու-թիւն յայտնելով իրաւաբանական յանձնաժողովին նրա հիմնաւոր աշխատանքի համար այդ հարցում»:

Մի պարուն, որ ցանկանում է իր անունը զազանի պանել, ուղարկել է մեզ Բագուից հա-րիւր բուբլի բաժանելու Քիֆլիսում գտնվող արքայա ընտանիքներին և գաղթականներին: Բա-ժանիկից յետոյ մենք կը հարգեմք այդ մասին «Մշակ» մէջ: Մենք կարծում ենք, որ կի՞ն ու-րիշներն էլ հետեւին պարունի օրինակին, մենք կարող կը լինենք նպաստներ տալ կարօտեալ-ներին ներկայ գատական տօներին:

Մեկ խնդրում են հարգողել, որ այսօրվանից սկսած մինչև երկուշաբթի, ապրիլի 6-ը, մրգերի ցուցահանդէսը, տօները պատճառով, փակված կը լինի, իսկ ամսի 6-ից դարձեալ բաց կը ընի հասարակութեան համար: Առաջին հինգ օրը այցելել են ցուցահանդէսը 500 հոգի վճարով և 600 հոգի առանց վճարի: Վերջիններս թոււմ են հրախրված անձինք և զանազան զարոյցների աշակերտները, օրինակ, ինստիտուտի, ս. Նու-նէի դպրոցի, Ներսիսեան դպրոցի, գիմնազիայի, օր. Օսանջանեանի դպրոցի, կաղեմակի կորպու-սի, տիկին Բրինձօվայի դպրոցի աշակերտները: Միւս զարոյցների աշակերտներն էլ կարող են ձրիապէս այցելել ցուցահանդէսը:

Վիլնայի «Հանդէս Ամսօրեայ» ամսագրից, առաջ բերելով «Մշակ» մէջ տպված լուրը պրո-ֆեսոր Մարրի և վրաց բանաստեղծ Ավակի Ծե-րեթիլի մէջ ծագած բանակու-ի մասին, աւե-լացնում է. «Շատ ուշ է մնացել պ. Ծերեթիլի»:

—Մենք ենք, լավեց անհամարձակ պատաս-խանը:

- Վուր ով էր:
- Կարո և Կոստո:
- Կարո և Կարո և Կոստո:
- Վարդանի տղերք:
- Ի՞նչ Վարդան, ինչ էք ասում:
- Խարաղ Վարդան, որը մի ժամանակ մե-ռաւ... մեռաւ և թաղեցին:
- Մէլը զայրացած էր, որ իրան չը թողնելն հանգիստ անկողին մտնելու: Սակայն ձայնիցից նկատելով, որ երեխաների հետ ունի գործ, հե-տաքրքրվեց և բացեց դուռը:
- Հա, ինչ էք ուզում:
- Երեխաները կպան իրար ու լուռ մնացին:
- Կարելի է քաղցած էք, հաց էք ուզում:
- Արի մեր տունը, մանկան յատուկ աղեր-սանքով արտասանեց մեծը, որին կարելի էր տասը տարեկան համարել:
- Ի՞նչ կայ ձեր տանը:
- Գնաւք մի յօպէ, բիճա զան,—կրկնեց երե-խան,—մի րօպէ:
- Ե՛կ, ասացէք, ով էք, ինչ էք ուզում. ինչ կայ ձեր տանը, գոռաց զայրացած Մէլը՝ զրոյանց մեքենաբար լուցկի հանեց:
- Խօսող երեխան հաղու լսելի կերպով նկե-կաց, փոքրը հետեւեց նրան, բայց աւելի բարձր ձայնով: Գրկներեքը քաշ դցած և զանդաղ քաշ լքելով հետագան այդ տեղից և անհետացան խա-ւարի մէջ: Մէլը մնաց դրան մէջտեղ արձանա-ցած: Չը գիտէր ինչ անէր:
- Կիտէի, որ օրս պէտք է փիս վերջանար, երեկոյան տերեւներն հանդիպեցի, փնթփնթամ

